



# ՀԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ ԿԵՐՊԱՐԸ

XX ԴԱՐԻ ԵՎ  
ԱՐԴԻ ՀԱՅ ԱՐՎԵՍՏՈՒՄ

ՍԱԹԵՆԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ



SATI VARDANYAN

# THE IMAGE OF JESUS CHRIST

IN THE 20th CENTURY AND  
CONTEMPORARY ART OF ARMENIA



**EDIT PRINT**  
Publishing House

2020

Ս Ա Թ Ե Ն Ի Կ Վ Ա Ր Դ Ա Ն Յ Ա Ն

# ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԿԵՐՊԱՐԸ

XX ԴԱՐԻ ԵՎ  
ԱՐԴԻ ՀԱՅ ԱՐՎԵՍՏՈՒՄ



ԷՂԻԹ ՊՐԻՆՏ  
հրատարակչություն  
2020



ՀՏԴ 73/76  
ԳՄԴ 85.1  
Վ 301

Գիրքը երաշխավորված է ԵՊՀ Պատմության  
ֆակուլտետի գիտական խորհրդի կողմից՝ 21.04.2015  
N° 9 նիստի արձանագրությամբ

Հրատարակվել է հեղինակի միջոցներով

**Սաթենիկ Վլադիմիրի Վարդանյան**

**Վ 301** Հիսուս Քրիստոսի կերպարը XX դարի և արդի  
հայ արվեստում / Ս. Վարդանյան.- Եր.: Էդիթ Պրինտ,  
2020.- 360 էջ:

ՀՏԴ 73/76  
ԳՄԴ 85.1

Գրքում ուսումնասիրված են XX դարի և արդի հայ  
արվեստում Կատարյալ Անձի՝ Հիսուս Քրիստոսի կեր-  
պարի մեկնաբանումները: Սույն աշխատությունը նվիրված  
է ժողովրդիս և առանձնապես՝ երիտասարդությանը:

ISBN 978-9939-75-452-9

© Վարդանյան Ս.  
© Էդիթ Պրինտ, 2020

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

|                                                               |     |
|---------------------------------------------------------------|-----|
| Մուտք .....                                                   | 9   |
| <b>Գ Լ ՈՒ Խ Ա Ռ Ա Ջ Ի Ն</b>                                   |     |
| ՀԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ ՊԱՏԿԵՐՄԱՆ ԱՎԱՆԴՈՒՅԹԸ .....                    | 16  |
| Համաշխարհային արվեստում .....                                 | 17  |
| Հայ միջնադարյան և Նոր շրջանի արվեստում .....                  | 52  |
| <b>Գ Լ ՈՒ Խ Ե Ր Կ Ր ՈՐ Դ</b>                                  |     |
| ՀԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ ԿԵՐՊԱՐԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒՄԸ                          |     |
| 1900-1920-ԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՅ ԿԵՐՊԱՐՎԵՍՏՈՒՄ .....                    | 74  |
| Կատարյալ Անճը Վարդգես Սուրենյանցի արվեստում .....             | 85  |
| Քրիստոսի կերպարը Եղիշե Թադևոսյանի արվեստում .....             | 124 |
| Գևորգ Բաշինջաղյանի Հիսուսը .....                              | 172 |
| Հիսուսի կերպարի արձարծումը Արշակ Ֆեթվաճյանի արվեստում .....   | 188 |
| Քրիստոսի կերպարը Հակոբ Գյուրջյանի արվեստում .....             | 202 |
| Երվանդ Քոչարի «Տեսիլքը» .....                                 | 226 |
| Եզրակացություններ .....                                       | 236 |
| <b>Գ Լ ՈՒ Խ Ե Ր Ր ՈՐ Դ</b>                                    |     |
| «ԶՆՀԱԼԻՑ» ՄԻՆՉԵՎ ՔՐԻՍՏՈՍԻ ԿԵՐՊԱՐԻ ՆՈՐ                         |     |
| ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄՆԵՐԸ (ԱԼԲՈՄ) .....                                 | 238 |
| 1960-1980-ականներ .....                                       | 239 |
| Անկախ Հայաստանի ուղին .....                                   | 276 |
| Հայկ Ազարյանի ստեղծած Ամենակալ Քրիստոսը .....                 | 319 |
| THE IMAGE OF JESUS CHRIST IN THE 20 <sup>TH</sup> CENTURY AND |     |
| CONTEMPORARY ART OF ARMENIA. RESUME .....                     | 326 |
| Գրականության ցանկ և աղբյուրներ .....                          | 330 |
| List of the Used Literature and Resources                     |     |
| Հապավումների ցանկ .....                                       | 337 |
| List of Abbreviations                                         |     |
| Նկարների ցանկ .....                                           | 338 |
| List of Pictures                                              |     |



1. Ռոմեո Ջուլիակյան, «Գրիգոր Նարեկացի» մեդալ, ավերս, 1991  
Romeo Julhakyan "Grigor Narekatsi" medal, aversé

# ՆԱՐԵԿԱՅԻ

Մատյան Ողբերգության խ, Գ

Այս բոլոր սաստիկ անճողոպրելի փորձություններից  
Լոկ դու կարող ես փրկել, **Տե՛ր Հիսուս,**  
Եվ ամենամեղ հոգուս շնորհել հանգիստ ու անդորր.  
Ուստի և Նայի՛ր Դու, որ քաղցր ես բոլորի հանդեպ,  
Ինձ շրջափակող անզերծանելի այս վտանգներիս:  
Կենազեն խաչիդ սրով հաղթական  
Կտրատի՛ր վարմիս ցանցերը բոլոր,  
Որոնք ամենուստ պարապատել են մահապարտ գերուս.  
Տո՛ւր հանգստություն թյուր ընթացողիս ոտներին երեք.  
Քուժի՛ր հրատապ տոչորումը բորբ մահախեղդ սրտիս,  
Վանի՛ր դիվային ու չարահնար խռովքս հանցավոր.  
Չարի կենակցիս մթամած հոգու  
Անձկությունն անհույս հալածի՛ր անհետ.  
Յրի՛ր բռնակալ մեղքիս ծխամած թանձրությունն անլույս.  
Զնջի՛ր, կորցրո՛ւ զագիր, թխատիպ  
Ախտը կրքերիս ապականարար:  
Նորոգի՛ր մեծ ու հզորիդ անվան  
Պաշտելի փառքի լուսապատկերը պայծառ՝ հուզուս մեջ,  
Հզորացրո՛ւ փայլը շնորհիդ՝  
Հողազանգվածիս դիմազարդելու,  
Մտատեսությամբ օժտելու համար.  
**Սուրբ ճաճանչումով պարզի՛ր մեղսամած**  
**Այս մռայլն ու ինձ վայելչազարդի՛ր,**  
**Որ պատկերը Քո երևա իմ մեջ,**  
**Եվ աստվածային կենսատու անեղծ**  
**Երկնավոր լույսով ծածկի՛ր եռադեմ էությունն անձիս:**  
**Զի Դու ես միայն օրհնյալ Հորդ հետ՝ ի գովք Սուրբ Հոգուդ՝**  
**Հավիտյաններից հավիտյանս. ամեն:**

Թարգմ. Վազգեն Գևորգյանի,  
Երևան, «Սովետական գրող», 1979



2. «Մուտք Երուսաղեմ», Հեթում Բ արքայի Ճաշոց, 1286, Կիլիկիա, Երևան, Մատենադարան № 979  
 "Entry into Jerusalem", Palm-Sunday of King Hetum II, Cilicia, Yerevan, Matenadaran

Արդի հայ հասարակության մեջ նոսրացել է հզոր անձի՝ իմաստուն անհատի ներկայությունը: Տարիներ շարունակ մենք փորձեցինք գտնել դրա պատճառներն ու լուծումները, ուստի դիմեցինք կերպարվեստի ոլորտին, որն առավել տեսանելի ներկայացրեց իրողությունը: 2012 թվականին սա դարձավ մեր ատենախոսության թեման: Այժմ որոշ հավելումներով ներկայացնում ենք այն լայն հանրությանը:

«Կարևորն ու էականն այն է, որ հավաքը զորություն ունենա ներշնչելու և անհողորդորդ պահելու մեր մեջ վեհագույն ձգտումները, իդեալ՝ մի գաղափար, որ, նոր ժամանակների ծնունդ լինելով, կարող է փոխարինել այն ոգեշունչ և սրբազան փրամադրությունը, որ հնում հապուկ էր կրոնին»<sup>1</sup>:

Նիկողայոս Ադոնց

**XX** դարում առաջացած և արդի հայ իրականության մեջ արտացոլվող բազմաթիվ «կուռքերի», մեծ առաջնորդների, կեղծ իդեալների գոյությունը աղճատել էր մեր ազգի ձգտումը դեպի իրական իդեալ, արդարությանը հասնելու մեր դարավոր ճանապարհը խորհուրդորդվել էր դատարկության և ստի մթնոլորտում: Ուստի կենսականորեն անհրաժեշտ է գտնել բացարձակ անխտորելի անթերի իդեալ՝ մաքրելու, բյուրեղացնելու համար մեր ուղին: Եվ կրոնի, և՛ արվեստի, և՛ գիտական մտքի ժառանգությունն օգնեց բացահայտելու պարզ մի ճշմարտություն. **Հիսուս Քրիստոսի կերպարը մինչ օրս ներկայանում է որպես ամենադրական, առավելապես հզոր և կատարյալ էություն: Քրիստոսի կերպարը իր բոլոր բացարձակ էություններով, բացարձակ իմաստությամբ, որն է՝ գիտությունն ու իմացությունը, բացարձակ կամքով, որն է՝ ուժն ու իշխանությունը, և բացարձակ սիրով, որն է՝ սրբությունը, անգերազանցելի է մարդկության պատմության մեջ երբևէ գոյություն ունեցող անձերից<sup>2</sup>:**

XX դարը մուտք գործեց փիլիսոփայական բազմաբնույթ, իրարամերժ տեսություններով և քրիստոնեական կրոնի հանդեպ չվստահող վերաբերմունքով: Մտավորականների պատկերացումները հիմնականում շաղախված էին նյութապաշտական, ռացիոնալիստական, անգամ դիվապաշտական, հետո՝ էքզիստենցիալիստական միտումներով: Այս երևույթները դրսևորվում են մոդեռնիզմի արվեստում, որին հարող յուրաքանչյուր խմբավորում, յուրաքանչյուր անհատ փորձում էր յուրովի մեկնաբանել սեփական հավատքը, աշխարհընկալման իր «իդեալը»:

Միանգամայն այլ էր իրավիճակը տևականորեն պետականություն չունեցող միևնույն ժողովրդի երկու տարանջատ հատ-



<sup>1</sup> **Ադոնց Ն.** Հայոց եկեղեցու հազարվեցհարյուրամյակի նախօրեին //Հայաստանի ոսկեհանքը, Երևան, «Հայագիտակ», 2006, էջ 142:

<sup>2</sup> Համաձայն XX դարի ռուս խոշոր փիլիսոփա, դիցաբանագետ Ալեքսեյ Լոսևի՝ բացարձակ իրականության մեջ կատարյալ անձն օժտված է երեք հիմնական բացարձակ էություններով, տե՛ս **Лосев А. Ф.** Диалектика мифа. Дополнение к "диалектике мифа". Москва, "Мысль", 2001, с. 330-341.

**3.** Արտաշես Հովսեփյան, «Նիկողայոս Ադոնց», 1989, բազալտ, ք. Սիսիան Artashes Hovsepyan. "Nicholas Adontz", basalt, town of Sisian



# ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ՊԱՏԿԵՐՄԱՆ ԱՎԱՆԴՈՒՅԹԸ

«Նա բացվել էր այնպես, ինչպես կարելի էր Նրան տեսնել: Այդպես Նա բոլորին բացվեց: Նա բացվեց մեծերին՝ ինչպես մեծ, Նա բացվեց փոքրերին՝ ինչպես փոքր, Նա բացվեց հրեշտակին՝ ինչպես հրեշտակ և մարդուն՝ ինչպես մարդ: Որովհետև Նրա Բանը (Լոգոսը) ծածկված է բոլորից: Որոշ մարդիկ տեսել են Նրան՝ մրաժեղով, որ տեսնում են իրենք իրենց: Բայց երբ Նա բացվեց Իր աշակերտներին՝ փառքով, լեռան վրա, Նա փոքր չէր, Նա եղավ մեծ: Բայց Նա աշակերտներին էլ դարձրեց մեծ, որպեսզի նրանք կարողանան տեսնել Նրան՝ մեծին»:<sup>1</sup>

Փիլիպոս առաքյալ

<sup>1</sup> Ավետարան՝ ըստ Փիլիպոսի // Պարականոն Ավետարաններ (կազմ., թարգմն. Հարությունյան Հ.Խ.), Երևան, հեղինակային հրատարակություն, 2010, էջ 118, **Евангелие от Филиппа** // Апокрифы древних христиан: Исследование, тексты, комментарии / Редкол.: Окулов А.Ф.(предс.) и другие, Москва, «Мысль», 1989, с. 277.

## ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԱՐՎԵՍՏՈՒՄ

Քրիստոնեությունը շրջադարձային երևույթ էր մարդկության պատմության մեջ: Մարդեղացած Աստծո գաղափարով է պայմանավորված բազմաթիվ ազգերի հավատքի իմաստը, մարդկային իդեալի՝ բարու, իմաստության, ազատության մասին պատկերացումները: Հիսուսը ներշնչման անսպառ աղբյուր է բարոյականություն, ճշմարտություն, հավերժական գաղափարներ որոնող մարդու համար: Թվում է՝ Հիսուսի կերպարի շուրջ ծավալվող գիտական տեսությունները, փիլիսոփայական հետազոտությունները, գրական-գեղարվեստական գործերն սպառել են իրենց: Սակայն անհուն է բացարձակ երևույթի բացահայտման ճանապարհը. ամեն մի դարաշրջան իր համար գտնում է նոր հարցեր, նոր պատասխաններ, նոր բացահայտումներ:

Գրիգոր Նյուսացին IV դարում գրում է. «...Աստվածային գեղեցկությունը փայլում է ոչ թե ինչ-որ մարմնի շնորհիվ կամ գույների գրավչություն ունեցող կերպարի գեղեցկությամբ, այլ մտա-հայեցվում է անճառելի երանության մեջ, ինչպիսին որ է առաքինությունը»:<sup>2</sup>

Հիսուս Քրիստոսի կերպարի աստվածային գեղեցկությունը շուրջ 2000 տարի անփոփոխ է մնում իր կատարելության մեջ: Սակայն ամեն մի ազգ, ամեն մշակույթ, ամեն անհատ յուրովի է մեկնաբանում նրան: Այդ մեկնաբանությունները կարող են փաստացի նյութ հանդիսանալ՝ պարզելու, թե ինչպիսի հասարակություն է եղել տվյալ դարաշրջանում, ինչպես է այդ հասարակության մեջ արտացոլվել կատարյալ մարդու պատկերացումը, ինչքանով է մարդու հավատքը մոտե-

<sup>2</sup> Սբ Գրիգոր Նյուսացի, Տեսութիւն ի մարդոյ կազմութիւն, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրատարակչություն, 2008, էջ 59: Այս նույն միտքը Գրիգոր Նյուսացուց ցիտում է Հովնան Դամասկացին VIII դարում, տե՛ս **Иоанн Дамаскин**. Три защитительных слова против отвергающих святые иконы //История эстетики. Памятники мировой эстетической мысли. т. 1, Античность. Средние века. Возрождение. Москва, Изд. Акад. Худ. СССР, 1962, с. 335. /թարգմ.՝ Ս.Վ./:



26. Քրիստոս, «Դեհիսիս» խճանկարի հատված, Կոստանդնուպոլսի Սբ Սոֆիայի տաճարի հարավային սրահ, XIII դ. 60-ականներ | Christ, fragment of "Deesis" mosaic in the southern hall of St. Sophia Church in Constantinople, 60s of XIII c.

Պատկերագրական տիպերի մեջ արտահայտվեցին Քրիստոսի կերպարի ընկալումները: Բյուզանդական գեղագիտական պատկերացումները ձևավորվեցին քրիստոնեական կրոնի գիտակցությամբ: Դարերի ընթացքում բյուզանդացի նկարիչները, պահպանելով հելլենիստական արվեստի սկզբունքները և նրբորեն վերափոխելով դրանք, կարողացան պատկերները մոտեցնել քրիստոնեական գաղափարներին:<sup>11</sup> Հունա-հռոմեական՝ անտիկ արտաքին գեղեցկության իդեալը փոխարինվեց հոգևոր կատարելության իդեալով, աղոթքի ինքնամոփվածությամբ, խոր հայեցողությամբ: Հիսուսի կերպարն օժտվում էր հոգևոր լույսով՝ ներքին իմաստով, Նրա գերակայող ուժը դառնում էր

իմաստության, սիրո, կարեկցանքի, երբեմն իշխանության, կենարար ուժի արտահայտություն<sup>12</sup> [նկ. 16-29]: Ընդ որում, այս պատկերների հարթապատկերային սկզբունքը և «հակադարձ հեռանկարը» ձևավորվում է ոչ թե իրականության տեսողական ընկալման վրա, այլ նախ և առաջ սիմվոլների՝ նշանների համակարգի, որը համապատասխանեցված է մտահայեցված կերպարին: Սրբապատկերներում կերպարները չեն գործում. նրանք առկա են իմաստավոր հավերժության մեջ:<sup>13</sup>

<sup>11</sup> Տե՛ս **Лазарев В.** История византийской живописи. В 2-х томах, Москва, "Искусство", 1886.

<sup>12</sup> Տե՛ս **Попова О.** Образ Христа в византийском искусстве V-XIV веков // **Попова О.** Проблемы византийского искусства. Мозаики, фрески, иконы. Москва, "Северный паломник", 2006, с. 966.

<sup>13</sup> Տե՛ս **Мочалов Л.** Пространство мира и пространство картины: Очерки о языке живописи. Москва, "Советский художник", 1983, с. 70-96, **Раушенбах Б.** Пространственные построения в живописи. Москва, "Наука", 1980, с. 94.



74. Քառակող կոթող, IV-V դդ., Քասախի բազիլիկայի մոտ, Ապարան, լուսանկ. Սաթենիկ Վարդանյան  
The Four-sided Obelisk, IV-V c., near Kasakh Basilica, Aparan, Photo by Sati Vardanyan



75. Քառակող կոթող, V-VI դդ., Հառիճ, ՀՊԹ, Երևան  
The Four-sided Obelisk, Haritch, V-VI c., HMA, Yerevan

## ՀԱՅ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԵՎ ՆՈՐ ՇՐՋԱՆԻ ԱՐՎԵՍՏՈՒՄ

...Եթե կամիք Քրիստոսի Աստուծոյ ծառայել և սիրել զըպատուիրանս Նորա՝ զընոյն գիրս զորոց զանուանս ի սմա գրեալ է յուզեցէք, և յորժամ գտանէք՝ նոքա ցուցանեն զճշմարիտ ճանապարհն Աստուծոյ: Եւ վասն պարկերացն այսչափ ևեթ բաւական լիցին որ միտ ունին:

Վրթանես Քերթոզ<sup>36</sup>

Քրիստոնեությունը առաջինը պետական կրոն ընդունած հայերը ահավասիկ դեռ չէին գիտակցում, որ դարերի հողմերում ինքնության պահպանման միակ երաշխիքով՝ Քրիստոսի գոյությամբ պիտի զորեղանան: Եվ արդեն մեկ դար անց հայոց միտքը փայլատակեց հզոր անհատների բույլով՝ Մեսրոպ Մաշտոց, Սահակ Պարթև, Մովսես Խորենացի, Եղիշե, Դավիթ Անհաղթ, Անանիա Շիրակացի...

Արևելաքրիստոնեական մշակույթի կրող **հայկական միջնադարյան արվեստը** ձևավորվեց բյուզանդական պատկերագրության վերոնշյալ սկզբունքներով, ինչպես նաև քրիստոնեական կրոնի ազգային ընկալումներով: Հիսուսի պատկերը ի հայտ է գալիս վաղ միջնադարյան եկեղեցիների և հուշակոթողների՝ Հառիճի, Օձունի, Մրենի, Քասախի, Դվինի որմնաքանդակներում (VI-VII դդ.) [նկ. 74-75, 77]: Արուճի, Մրենի, Լմբատավանքի, Կոշի, Կարմրավորի (VII դ.) ավագ խորանների որմնանկարներում պատկերված է եղել Համբարձման տեսարանը՝ միավորված Եզեկիելի տեսիլքի կամ Օրենքներ տվող Աստծո հորինվածքի հետ [նկ. 76]:<sup>37</sup> Վաղ քրիստոնեական այս հուշարձանները առանձնանում են դասական արվեստի համամասնությունների պահպանմամբ, շարժունակությամբ, գույների հարուստ և ներդաշնակ համադրությամբ:

<sup>36</sup> Վրթանես Քերթոզ, Յաղագս Պատկերամարտաց, մեջբերված է՝ Ս. Տեր-Ներսեսյանի «VII դարի մի երկ, նվիրված պատկերների պաշտպանությանը» // Ս. Տեր-Ներսեսյան, Հայ արվեստը միջնադարում, ՀՍՍՀ ԳԱ ՀՐԱՏ. Երևան, 1975, էջ 14:

<sup>37</sup> Տես Մաթևոսյան Կ. Արուճ, Երևան, «Հայաստան», 1987, էջ 47, **Акопян З. А.** Монументальная живопись Армении VII столетия в контексте восточнохристианской традиции, Актуальные проблемы теории и истории искусства: сб. науч. статей. Вып. VI, СПб., 2016. с. 133-142.



# ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԿԵՐՊԱՐԻ ՄԵԿՆԱ- ԲԱՆՈՒՄԸ 1900-1920- ԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՅ ԱՐՎԵՍՏՈՒՄ

Այս ժողովուրդը, որ ապրած է հարյուր հազար Գողգոթաներ հարյուր հազար Հիսուսներու, այս ժողովուրդը ապրած չէ երբեք ներքին, բարոյական Գողգոթա մը: Ուշագրավ է կրոնական տագնապներու փնտռումներու պակասը մեր մեջ. ուշագրավ է նաև պակասը առաքելության և արիականության գիտակցության:<sup>1</sup>

Կոստան Զարյան,  
«Հայուն Հիսուսը» (1910-1922)

<sup>1</sup> Զարյան Կ. Հայուն Հիսուսը //Նավատոմար, (կազմեց՝ Խաչատրյան Յ.), Երևան, «Սարգիս Խաչենց», 1999, էջ 86

## XX

դարասկզբի հայ ականավոր մտավորականները՝ կերպարվեստ արարող վարպետները, անդրադարձել են քրիստոնեական թեմատիկային, մասնավորապես Քրիստոսի կերպարին: Նրանց շարքում են Վարդգես Սուրենյանցը, Գևորգ Բաշինջաղյանը, Եղիշե Թադևոսյանը, Արշակ Ֆեթվաճյանը, Հակոբ Գյուրջյանը, Երվանդ Քոչարը և այլք: Այս նկարիչների արվեստում Հիսուս Քրիստոսի կերպարի գեղարվեստական արտացոլումները տվյալ ժամանակաշրջանի հայ հասարակության բարոյագիտական արժեքների հարազատ պատկերն են: Հայ նկարիչները, Հիսուսի կերպարը նորովի մեկնաբանելով՝ ձևավորել են եկեղեցական նոր արվեստ և նոր մոտեցում:

XX դարի առաջին քառորդի հայկական արվեստի զարգացումն ունի իր առանձնահատկությունները, նախ և առաջ՝ աշխարհագրական, քաղաքական մասնատվածությունը: Այսպիսով, հայկական արվեստը, մասնավորապես Քրիստոսի կերպարը, ստեղծվում էր Արևելյան Հայաստանի տարածքում, որը Ռուսաստանի ենթակայության տակ էր (այստեղ էր նաև Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը), Արևմտյան Հայաստանի տարածքում՝ Թուրքիայի տիրապետության տակ գտնվող տարբեր հայաբնակ կենտրոններում և, վերջապես, հայկական գաղթօջախներում՝ Ռուսաստանի կայսրության քաղաքներում (Թիֆլիս, Ղրիմ, Լվով, Մոսկվա, Սանկտ Պետերբուրգ, Նոր Նախիջևան, Աստրախան, Արմավիր), Երուսաղեմում, Իրանում, Ֆրանսիայում, ԱՄՆ-ում և այլուր: Քաղաքական-մշակութային տարբեր միջավայրերում գործող հայ արվեստագետներն իրենց արվեստում կրում էին տեղական մշակույթի ազդեցությունը, մյուս կողմից՝ անընդհատ շփման մեջ էին տարբեր երկրներում ապրող հայերի, գործող հայկական եկեղեցիների, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հետ:



**122.** Փարիզի կենտրոնում՝ Ժան Գուժոն փողոցում Սբ Հովհաննես Մկրտիչ հայկական եկեղեցին, 1904 | Armenian Cathedral of St. John the Baptist in the center of Paris on Jean-Goujon street



**123.** Փարիզի Սբ Հովհաննես Մկրտիչ հայկական եկեղեցու ավագ խորանի որմնանկարը: Գահակալ Քրիստոսի պատկերը ստեղծել է ֆրանսիացի նկարիչ Պաոլ Լեռոյը | Fresco of the senior altar of the Armenian Cathedral of St. John the Baptist in Paris. "The Enthroned Christ" is created by French painter Paul Leroy

Այդ իսկ պատճառով ազգային նկարագիրը միշտ առկա է նրանց արվեստում:

XX դարի առաջին քառորդում ստեղծված՝ Հիսուս Քրիստոսի պատկերով հաստոցային գեղանկարչության և քանդակագործության աշխատանքներ հայտնաբերվել են ՀԱՊ-ի ցուցասրահներում (Ե. Թադևոսյան, Հ. Գյուրջյան), մյուսները՝ գեղանկարի, քանդակի, գրաֆիկայի և հուշաձեռագրային ֆոնդերի պահոցներում: Հիսուսի պատկերով աշխատանքների մի մասը հայտնաբերել ենք Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տարբեր թանգարաններում, վանքի պահոցներում: Հետաքրքրություն են ներկայացնում Թիֆլիսի Սբ Աստվածածին (Սբ Գևորգ) հայկական եկեղեցու բացառիկ որմնանկարները՝ ստեղծված 1920-1924 թվականներին Գ. Բաշինջաղյանի<sup>45</sup> վրձնով: Որոշ աշխատանքների մասին տեղեկություն ենք քաղել տարբեր տարիներին հրատարակված գրքերում, կատալոգներում և մամուլում, նրանց մեջ զետեղված գրավոր վկայությունների, նկարների


շնորհիվ, ինչպես նաև ՀԱՊ-ի հուշաձեռագրային ֆոնդում պահվող լուսանկարներից, նամակներից, հոդվածներից: Եղիշե Թադևոսյանի որոշ աշխատանքներ հայտնաբերվել են Մոսկվայի Տրետյակովյան պետական պատկերասրահում և Վ. Պոլենովի անվան թանգարան-ավանդատանը: Երևանում (մասնավոր հավաքածուում) է գտնվում Ե. Քոչարի «Տեսիլք» կտավը:

Մեր ուսումնասիրությունները հիմնականում վերաբերում են Արևելյան Հայաստանի, այժմ՝ Հայաստանի Հանրապետության թանգարաններում, եկեղեցիներում պահվող աշխատանքներին: Արևմտյան Հայաստանում և սփյուռքում գտնվող աշխատանքների մասին պատկերացում ենք կազմում առավելապես գրավոր աղբյուրների հիման վրա. այն հետազա որոնումների, գործողումների և հետազոտությունների ոլորտ է: Օրինակ՝ Իզմիր քաղաքից վաղամեռիկ հայ քանդակագործ Զարեհ Բեյուքյանի (1890-1917) «Խաղաղություն ամենքին» մարմարյա քանդակի վերատպությունից կարելի է կարծիք կազմել, որ եվրոպական (Վենետիկ) կրթություն

<sup>45</sup> Գ. Բաշինջաղյանի այս որմնանկարների մասին առաջին անգամ լուսաբանվել է մեր գիտական թեզում, 2012 թ.:



205. Ալեքսանդր Իվանով, «Հիսուսի դատապարտումը մահվան. Պիղատոսը լվանում է ձեռքերը», 1840-ականների վերջ - 1850-ականներ, թուղթ, ջրաներկ, իտալական մատիտ, 29,5x46,6, Մոսկվա, ՏՊ | Alexander Ivanov "The Condemnation of Jesus to Death: Pilate Washes His Hands", end of 1840s up to 1850s, paper, water colour, Italian pencil, Moscow, TG



206. Եղիշե Թադևոսյան, «Հիսուսի դատապարտումը մահվան. Պիղատոսը լվանում է ձեռքերը», էսքիզ, (Ալ. Իվանովի էսքիզի ազատ ոճի կրկնօրինակում), 1893, կտավ ստվարաթղթի վրա, յուղաներկ, 31x31,5, Պոլենովո, Վ. Դ. Պոլենովի անվ. թանգարան-ավանդատուն | Yeghishe Tadevosyan "The Condemnation of Jesus to Death: Pilate Washes His Hands", (free style reproduction of the sketch by Al. Ivanov), canvas, cardboard, oil painting, Polenovo, Museum-Reserve named after V. D. Polenov

**XX** դարի առաջին քառորդի հայ արվեստում Հիսուս Քրիստոսի կերպարի ուսումնասիրությունը մեզ բերում է հետևյալ եզրակացությունների.

1. Հիսուս Քրիստոսի բացարձակ կերպարը յուրաքանչյուր մշակույթ, ամեն ազգ ու անհատ պատկերել է յուրովի: Այդ պատկերները տվյալ ժամանակաշրջանի բարոյահոգեբանական, ինչպես նաև գեղագիտական ընկալումների համակարգում գոյություն ունեցող ձևի ու բովանդակության նկարագիրն են: Հանդիսանալով բոլոր դարերի համար կատարյալ էություն՝ Քրիստոսի կերպարը գեղարվեստական ստեղծագործություններում ներկայանում է իր ժամանակի առավելագույն հզոր, մաքսիմալ դրական հատկանիշներով: Աշխատանքի առաջին գլխի եզրակացությունն այն է, որ Քրիստոսի կերպարի գեղարվեստական մարմնավորումը անցել է երկար ուղի՝ սրբապատկերից դեպի իրապաշտական նկար:

2. Հոգևոր կատարելությամբ, աղոթքի ինքնամոխիվածությամբ, խոր հայեցողությամբ է համակված Հիսուսի կերպարը բյուզանդական արվեստում. այն հիմք դարձավ քրիստոնեական ամբողջ մշակույթի համար: Այդ արվեստի պատկերագրական ու ոճական սկզբունքները ձևավորվեցին ոչ թե իրականության տեսողական ընկալման վրա, այլ նախ և առաջ սիմվոլների՝ նշանների համակարգի, որը համապատասխանեցված էր մտահայեցված կերպարին: Սրբապատկերներում կերպարները չեն գործում. նրանք առկա են իմաստավոր հավերժության մեջ:

3. Վերածննդի շրջանում պատկերագրության կանոնավոր ձևերը նահանջում են՝ իրենց տեղը զիջելով Քրիստոսի կերպարի մարդկային բնույթի շեշտադրմանը: Այդ իսկ պատճառով կերպարվեստի հիմնական առարկան դառնում է մարդը, նրա մարմնի անատոմիական կառուցվածքը, որը պատկերվում է պատրանքային «գծային» հեռանկար ունեցող միջավայրում: Քրիստոսի կերպարի ազատ մեկնաբանման՝ դիտողականության վրա հենված՝ իրապաշտական այս միտումները հետագա դարերում ավելի են ամրապնդվում:

4. Քրիստոսի կերպարի անհատականացման միտումը (Դ. Շտրաուս, Է. Ռենան) իր զարգացումն է ստանում XIX դարի երկրորդ կեսի արվեստում, ուր Փրկիչը ներկայանում է իբրև հոգևոր քարոզիչ, պատմական անձ կամ ժամանակակից մտավորական, իբրև վավերական մի կերպար: Ժամանակակից մարդու առջև ծառացած խնդիրները նշյալ դարի նկարիչները տեսնում էին ավետարանական ազնվագույն կերպարն իրական կյանքում, ապա իրապաշտական արվեստում մարմնավորելու մեջ: Այս միտումների անմիջական կրողը դարձավ XIX դարի ռուսական կերպարվեստը: Իսկ XX դարը, ինչպես ոչ մի դար, փորձության էր ենթարկվել իր անաստվածությամբ և Քրիստոսին դավաճանությամբ: Այդուհանդերձ, XX դարի էքսպրեսիոնիզմի, կուբիզմի, սյուրռեալիզմի և

մյուս՝ բացարձակ աշխարհիկ բնույթ կրող ուղղությունների ներկայացուցիչներին հետաքրքրել է Հիսուսի կերպարը: Յուրաքանչյուր նկարչի կերպար ոչ մի կապ չունի նախորդ ավանդույթի հետ, կարծես ամեն մի արվեստագետ փորձում էր ունենալ իր Քրիստոսին:

5. XIX դարի վերջի և հաջորդ դարասկզբի արվեստի նոր միտումներից բնականոն ազդվեցին նաև եվրոպայում ու Ռուսաստանում կրթություն ստացած հայազգի արվեստագետները: Պետականությունից զրկված Հայոց աշխարհի մասնատվածության, Թուրքիայի հայաջինջ և Ռուսաստանի գաղութատիրական ճնշման, դարասկզբի գաղափարական տարբեր հոսանքների առկայության պայմաններում անգամ Հիսուս Քրիստոսի կերպարը շարունակում էր ապրել հայության մեջ: Մի կողմից եկեղեցու պատվերով, մյուս կողմից ժամանակի և խղճի թելադրանքով XX դարի առաջին քառորդում ականավոր հայ վարպետներն անդրադարձել են Քրիստոսի կերպարին՝ վերջինիս տալով նոր մեկնաբանություններ ու ձևավորելով եկեղեցական նոր արվեստ: Վարդգես Սուրենյանցի, Գևորգ Բաշինջաղյանի, Եղիշե Թադևոսյանի, Արշակ Ֆեթվաճյանի, Հակոբ Գյուրջյանի ու Երվանդ Քոչարի արվեստում տեղ գտած Քրիստոսի կերպարի գեղարվեստական արտացոլումները տվյալ ժամանակաշրջանի հայ հասարակության բարոյագիտական արժեքների հարազատ պատկերներն են: XX դարի հայ նկարիչների ստեղծագործությունները բնավ չեն շարունակում հայ միջնադարյան և Նոր շրջանի Քրիստոսի պատկերման ավանդույթները, բայց եվրոպական նոր արվեստի ազդեցությամբ ստեղծված նրանց աշխատանքները առանձնանում են իրենց հայկական, ազգային բնույթով, առանձնահատուկ մոտեցմամբ: Հայ նկարիչները գեղանկարչություն բերեցին սեփական աշխարհը, այն է՝ գեղարվեստական թարմ արտահայտչամիջոցների, գույնի, հորինվածքի նոր հնարքների կիրառումներ: Այս շրջանի Քրիստոսի կերպարում հիմնականում կարելի է տեսնել ավետարանական իրադարձությունը պատմական իրականությանը համապատասխանեցնելը, իսկ Հիսուսի կյանքի հետ կապված դիպաշարերում՝ օրհասական խնդիրներ հնչեցնելը: Քրիստոսի կերպարը վերոհիշյալ նկարիչների կտավներում պարունակում է կենսափորձի, դիտողականության վրա հենված մոտեցում, երբեմն ժամանակակից մարդկանց կամ նույնիսկ սեփական կերպարի նույնականացում: Քրիստոսի կերպարը ներկայանում է ակադեմիական, իրապաշտական, որոշ դեպքերում՝ իմպրեսիոնիստական ուղղությունների համակարգում: Ժամանակաշրջանի պահանջարկը թելադրում էր երբեմն ստեղծել դյուրընկալելի՝ սալոնային արվեստին բնորոշ սրբանկարներ (Սուրենյանց, Ֆեթվաճյան, Բաշինջաղյան), թեպետ նկարների որակն այս դեպքում ամենևին չի տուժում: Նույն շրջանի եվրոպական մշակույթի նոր միտումները ևս յուրացվում էին նրանցից շատերի կողմից: Եվրոպական ու ռուսական արվեստում տարածված խորհրդապաշտական բնույթի աշխատանք է Ե. Թադևոսյանի

«Գրիգոր Լուսավորչի տեսիլը»: Կա նաև կերպարի մեկնաբանման առավել մոդեռնիստական՝ XX դարի նոր հայացքներով տողորված, միանգամայն կրոնամերժ մոտեցում Քրիստոսի կերպարին, մասնավորապես Հ. Գյուրջյանի և Ե. Քոչարի արվեստում:

6. Վարդգես Սուրենյանցը ոչ միայն զգայուն էր հոգևոր աշխարհի հանդեպ, այլև հնարավորություն ուներ այդ աշխարհի պատկերներն արտահայտել նոր՝ իրական կերպարներով, նոր միջոցներով: Նրա Քրիստոսը ներառում է իր ժամանակաշրջանի, իր ազգի գաղափարախոսությունը և անձնավորված է կոնկրետ անհատական կերպարի տեսքով: Թեև որոշ ստեղծագործություններ կրում են պատվիրատուի պահանջարկից բխող վիպագրական մոտեցում, այնուամենայնիվ պահպանում են սրբանկարների հատուկ հոգևոր իմաստությունը: Այսօր հայտնի են Սուրենյանցի՝ Քրիստոսին նվիրված 6 ստեղծագործություններ, ինչպես նաև երկու էսքիզներ՝ ստեղծված 1917 թվականին Յալթայի հայկական եկեղեցու որմնանկարների համար:

7. Եղիշե Թադևոսյանի՝ Քրիստոսի կերպարին անդրադառնալու գլխավոր ազդակը, անտարակույս, ռուս տաղանդաշատ նկարչի՝ Վասիլի Պոլենովի՝ Հիսուսի կերպարի ուսումնասիրությամբ ու յուրովի մեկնաբանմամբ տևական հետաքրքրությունն էր և ազգությամբ հայ իր շնորհալի աշակերտին այդ կերպարի ստեղծման կարևոր գործին մասնակից դարձնելը: Ծագումով էջմիածնեցի հայրենասեր հայ նկարիչը ջանում էր ժամանակի ամենաառաջադեմ միտումները ներմուծել հայրենի մշակույթ՝ քաջ գիտակցելով գեղեցկության ակունքների, բարոյական արժեքների ու անհատական կերպարների ստեղծման կարևորությունը հայոց կյանքում: Նա կարողացավ ստեղծել գեղարվեստական իր լեզուն, կերպարներին բնութագրելու իր կերպը, գույնի և լույսի նրբաճաշակ զգացողությունը:

8. Հիսուս Քրիստոսի կերպարի իրապաշտական մեկնաբանումը արտացոլվել է նաև Գևորգ Բաշինջաղյանի մի քանի աշխատանքներում: Դրանց շարքում են վերջերս հայտնաբերված «Գեթսեմանիի աղոթքի» երկու տարբերակները և Թիֆլիսի Սբ Աստվածածին եկեղեցու որմնանկարները: Բաշինջաղյանի ակադեմիական հորինվածքներում բնությունը կարծես Քրիստոսի վեի կյանքի մասնակիցն է: Բնության, մարդու և հավատքի փոխառնչության խնդիրները Բաշինջաղյանի արվեստում մեկ անգամ ևս շեշտում են նկարչի հակվածությունը ռուսական արվեստի ավանդույթներին:

9. Իրենց մեկնաբանմամբ՝ Արշակ Ֆեթվաճյանի Հիսուս Քրիստոսի կերպարով 4 գեղանկարչական կտավները և 1 մեծ ու մոտ 40 փոքր էսքիզային մատիտանկարները հարկ է բաժանել երկու մասի՝ ռուսական և ամերիկյան շրջանների: Ավետարանական իրադարձությունները վավերական պատկերելու եղանակը համախմբում է Ֆեթվաճյանին XIX դարի ռեանյան գաղափարախոսությամբ վարակված եվրոպացի, ռուս և հայ նկարիչների հետ: Այս շրջանում Ֆեթվաճյանի ստեղծած Հիսուսի կերպարները թեպետ վավերական են, համոզիչ, անատոմիապես ամուր կառուց-

վածքով, սակայն չեն արտահայտում նկարչի ապրած դարաշրջանի իրատապ հարցերը, դրանով իսկ կրում են պատվեր հանդիսացող վերացական գաղափար:

10. Հակոբ Գյուրջյանի «Քրիստոսի գլուխը» (մոտ 1914 թ.) ոչ միայն օտար է հայկական միջնադարյան որմնաքանդակների հանդարտ, խոհեմ, խորհրդապաշտական «Ամենափրկիչ» պատկերագրությանը, այլև առանձնանում է համաշխարհային կերպարվեստում երբևէ պատկերված Հիսուսի կերպարից: Այն ստեղծված է հզոր, արտահայտիչ դիմապատկեր ներկայացնելու միտումով: Գյուրջյանը միաժամանակ ներկայացրել է կերպարվեստի առջև դրված նոր խնդիրներ. այդ շրջանի քանդակագործության մեջ արդիական մոնումենտալիզմի և դեկորատիվիզմի ներգործությունը: Ողբի, տխրության, մահվան տրամադրությամբ են տողորված 1920-30-ական թվականներին Գյուրջյանի ստեղծած մահարձանները և նրանց համար էսքիզներ հանդիսացող կուբիստական բնույթի էսքիզները:

11. Խոր հավատքով ներշնչված միջնադարյան սրբապատկերների արարման ավանդույթի խզումը, որն սկիզբ առավ Վերածննդի դարաշրջանում և արդեն XIX դարում ներկայացավ իրապաշտական գեղանկարչությամբ, կարծես իր նպատակակետին հասավ XX դարի կուբիստապոփոփոստական մտածելակերպի միջավայրում: Քրիստոսի կերպարը ենթարկվեց հոգեվերլուծական փորձության և գեղանկարչական նոր միջոցների ու ձևերի կիրառման, ինչն արտացոլվեց Երվանդ Քոչարի «Տեսիլք. Քրիստոսն ու Մարիամ Մագդաղենացին» նկարում (1924 թ.):

12. XIX դարի վերջին և XX դարի սկզբին կերպարվեստում ռեալիզացվում էին էմպիրիկ մտածողության վրա հենված ավետարանական իրադարձությունների անհատական վերապրումները: Ուսումնասիրելով XX դարի առաջին քառորդի հայոց պատմությունը, հայ մտավորականների կյանքը, նրանց հայացքները՝ պարզ է դառնում, որ Քրիստոսի կերպարում հայ նկարիչներն ու քանդակագործներն արտահայտել են հայ մարդու, հայ մտավորականի, երբեմն նույնիսկ սեփական ես-ի էությունը: Մեր առջև ոչ թե միջնադարյան, այլ XX դարի Քրիստոսն է՝ երբեմն անտեսված, երբեմն մոռացված, բայց հավերժ գթացող ու արդարամիտ: Այս սրբանկարները նոր խոսք էին հայ հոգևոր մշակույթի միջավայրում: Անհատականացնելով, նորացնելով Հիսուսի կերպարը՝ նկարիչները փորձել են իրենց հայրենակիցներին հարազատ պահել հավատքի վեհագույն ձգտումներին:

XX դարում ևս բազմաթիվ արվեստագետներ կրկին փորձում էին նոր հայացք գցել, տեսնել, հասկանալ Քրիստոսի իդեալական կերպարը: Նայելով այդ բոլոր՝ իրար չնմանվող կերպարներին՝ հասկանալի է դառնում դարաշրջանի իրարամերժ գաղափարախոսության, հավատքի մասնատվածության, երբեմն հոռետեսության, երբեմն ինքնախաբեության միտումները: Կարևորն այն է, որ նրանք բոլորը ներկայացրել են միակ կատարյալ Անձին և փորձել են հասկանալ կամ մոտենալ, կամ նմանվել, կամ հաղթահարել սեփական անկատարելությունը: Բացարձակ Անձին ձգտելը մեր բնականոն կեցությունն է՝ կամքով, իմաստությամբ, սիրով համակված կյանքի բանաձևը:

360. Զիլմա Մադերա,  
Արա Հարությունյան,  
«Եղբայրության ձեռքեր», 1965,  
մարմար, Երևան, շրջանաձև  
պուրակ  
Jilma Madera, Ara Harutyunyan  
"Hands of Friendship", marble,  
Yerevan, Circle Park

Գ Լ ՈՒ Խ Ե Ե Ր Ր ՈՐ Դ

# «ՁՆՀԱԼԻՑ» ՄԻՆՉԵՎ ՔՐԻՍՏՈՍԻ ԿԵՐՊԱՐԻ ՆՈՐ ԲԱՑԱՀԱՅ- ՏՈՒՄՆԵՐԸ Ա Լ Բ Ո Մ

Դեռևս 1963 թվականին Իտալիայի Կարարա քաղաքի քաղաքապետ Ֆիլիպո Մարտինելին իր նամակում Երևանի իր գործընկերոջը՝ Գրիգոր Հասրաթյանին, հայտնում է, որ Կարարայի մարմարյա երկու ձեռքերը ինքը գնացքով ուղարկում է Հայաստան՝ ի նշան երկու քաղաքների եղբայրության: Հասնելով Երևան, քանդակագործ Արա Հարությունյանի միջամտությամբ, ձեռքերը նոր հորինվածք ստացան և տեղադրվեցին Երևանի օղակաձև զբոսայգում: Այդ նրբագույն կոթողի հանդիսավոր բացումը մեծ շուքով տեղի ունեցավ 1965-ին:<sup>\*</sup> Տասնամյակներ անց հայտնի դարձավ, որ այս ձեռքերը Քրիստոսի հանրահռչակ քանդակի ձեռքերն են, և տարիներ շարունակ իրենց ձյունաճերմակ ներկայությամբ պահպանել են մեր քաղաքի բարությունը: Իրականում, սրանք Հավանայի (Կուբա) 20 մետրանոց Քրիստոսի արձանի (1958) ձեռքերի կրկնօրինակներն են, որոնք նույն Կարարայում ստեղծել էր կին քանդակագործ Զիլմա Մադերան [նկ. 68, 360]:

<sup>\*</sup> Տե՛ս Հայկազուն Գրիգորյան Ա, «Բարեկամության ձեռքեր»: Ինչպես Հավանայի Քրիստոսի ձեռքերը Կարարայով հասան Երևան // "Երևան" N 4(5), 2012, էջ 50:

## 1960-1980-ԱԿԱՆՆԵՐ

Խորհրդային կարգերի հաստատումից հետո Հայաստանում, սկսած 1920-ականներից, գնալով նվազում ու գրեթե ավարտվում է Քրիստոսի պատկերման ավանդույթը, հանգամանք, որից, բարեբախտաբար, զերծ է մնում սփյուռքը:

Խորհրդային Հայաստանում Հիսուսի կերպարը հայտնվում է միայն կոմունիստական «կուռքերի» հաղթահարումից հետո, երբ 1950-1960-ականների խրուշչովյան «ծնհալը» հասնում է Հայաստան: Այս շրջանում մեր մշակույթում առաջանում են նոր միտումներ, գեղարվեստական նոր թեմաներ ու արտահայտչամիջոցներ: Սկզբնավորվում են ազգային ինքնագիտակցության, ավանդությունների, պատմության չլուծված խնդիրների արծարծումները: Գրականության և գրականագիտության մեջ տեսնում ենք համարձակ գաղափարների ներխուժում՝ Դերենիկ Դեմիրճյան, Գուրգեն Մահարի, Հովհաննես Շիրազ, Պարոյր Սևակ, Հրաչյա Քոչար, Խաչիկ Դաշտենց, Սերո Խանզադյան, Համո Սահյան, Մուշեղ Գալշոյան, Հրանտ Մաթևոսյան... Հայ արվեստում նկատվում է ստեղծագործող անհատի գեղարվեստական ինքնատիպ մտածողության ձևավորում: Նկարիչների աշխատանքներում սուբյեկտիվ ընկալումներն ու նրանց գունապլաստիկական յուրատեսակ արտահայտումը պայմանավորված էին այս շրջանում խորհրդային քաղաքականության և մշակույթի մեջ մի շարք փոփոխություններով ու նոր իրադարձություններով: Երկաթյա վարագույրի մասնակի փլուզումը, մեր երկրի ղեկավար անձանց հայրենանվեր առաքելությունը (Անտոն Քոչինյան, Յակով Զարոբյան, Գրիգոր Հասրաթյան, Կարեն Դեմիրճյան), արդյունաբերության և գրեթե բոլոր ոլորտների առաջընթացը ստեղծեցին արգասավոր հող մշակույթի առավել ազատ, համարձակ դրսևորման համար: Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիրի ստեղծումը



## ՀԱՅԿ ԱԶԱՐՅԱՆԻ ՄՏԵՂԾԱԾ ԱՄԵՆԱԿԱԼ ՔՐԻՍՏՈՍԸ

Ավանդույթ և արդիականություն

Վերջին տարիների հայկական եկեղեցաշինության մեջ Աբովյան քաղաքի նորակառույց Սբ Հովհաննես Մկրտիչ տաճարն առանձնանում է իր ճարտարապետական լուծումներով, քանդակագարդ շքեղ հորինվածքներով և հանդիսավորությամբ: Ուշագրավ են հատկապես այս կառույցի ներքին տարածքը զարդարող՝ Հայկ Ազարյանի ստեղծած որմնանկարները և առանձնապես գմբեթի Ամենակալ Քրիստոսի վեհաշուք պատկերը: Ինչքանով է արդիական, և ինչով է կարևորվում այս պատկերը հայ իրականության մեջ:

Հայկ սարկավագն արվեստում առաջին քայլերը հոր՝ Աբրահամ Ազարյանի արվեստանոցում է արել, բայց որպես սրբանկարիչ ձևավորվել է Ռումինիայի Ուղղափառ եկեղեցու Պատրիարքարանին կից գործող սրբանկարչության դպրոցում, ուր սրբանկարչության մեջ վարպետանալու նպատակով մեկնել է Վազգեն Ա Հայրապետի տնօրինությամբ՝ անավարտ թողնելով Էջմիածնի Հոգևոր Ճեմարանում ուսումնառությունը: Այնուհետև Գարեգին Ա Հայրապետի տնօրինությամբ ընդունվել և ավարտել է Բուխարեստի համալսարանի Աստվածաբանության

517. **Հայկ Ազարյան**, «Ամենակալ Քրիստոս», Աբովյան քաղաքի Սբ Հովհաննես եկեղեցի, 2013, բարձրությունը՝ 37 մ, պարագիծը՝ 20 մ  
**Haik Azarian**, "Christ Pantocrator", Church of St John the Baptist, Abovyan, 2013 (height 37 m, diameter 20 m)



518. Հայկ Ազարյանը Բուխարեստի Սբ Պողոս-Պետրոս ուղղափառ եկեղեցում աշխատելիս | Hayk Azaryan while working at St. Paul and Peter Orthodox Church in Bucharest

519. Հայկ Ազարյան, «Ամենակալ Քրիստոս», Արովյան քաղաքի Սբ Հովհաննես եկեղեցի, 2013, հատված | Haik Azarian, "Christ Pantocrator", Church of St. John the Baptist, Abovyan, fragment

Ֆակուլտետի ռեստավրացիայի բաժինը և այսօր ծառայում է Բուխարեստի Հայկական եկեղեցում: Պետք է նշել նաև, որ նկարիչը առաջնորդվել է արևելաքրիստոնեական գեղարվեստական ոճով, տեխնիկատեխնոլոգիայով՝ դրա հետ մեկտեղ համադրելով ժամանակակից որմնանկարչության մեջ օգտագործվող միջոցները, օրինակ՝ որմնանկարչության համար նախատեսված իտալական մոնումենտալ թիթեղյա ոսկին:

Ըստ քրիստոնեական պատկերագրության՝ «Քրիստոս Պանտոկրատոր»՝ «Ամենակալ» տիպը Քրիստոսին ներկայացնում է մինչև գոտկատեղը (հազվադեպ կարող է պատկերվել ամբողջ հասակով), օրինող աջ ձեռքով և Ավետարանը ձախ ձեռքում [նկ. 22-26]:<sup>313</sup> Բյուզանդիայում այն առաջանում է մոտավորապես IV-VI դարերում, իսկ ամենավաղ օրինակ կարող է համարվել Քրիստոս Ամենակալի VI դ. սրբապատկերը Սինայի Սբ Կատարինե վանքից: «Քրիստոս Պանտոկրատորը»՝ տեղադրված տաճարի ամենաբարձր հատվածում՝ տիրում է ամբողջ տարածության վրա՝ միավորելով հայրապետներին, մարգարեներին, առաքյալներին, եկեղեցու հայրերին, սրբերին, նահատակներին. բոլոր նրանց, ովքեր նախագուշակել էին եկեղեցու հաղթանակը: Նրա հսկայական կերպարը մարմնավորում է դեմիուրգի,

<sup>313</sup> Տես էջ 21, 23-24



Sati Vardanyan

# THE IMAGE OF JESUS CHRIST IN THE 20<sup>th</sup> CENTURY AND CONTEMPORARY ART OF ARMENIA

## RESUME

The divine beauty of Jesus Christ's image has been unchangeable in its perfection for about 2000 years. Nevertheless, different cultures, different nations and individuals interpreted the image of Jesus Christ in quite different ways. The representations of the Son of God reflected moral and aesthetic requirements of each particular period and followed the representational formulas existing within each artistic system and manner. The theme, which is discussed, has not become the subject of investigations yet. The unknown and scantily explored art works are appeared in a new light.

The research consists of an introduction, three subject chapters (the second and third chapters are divided into subsections, each of them shows the reflection of Jesus Christ image in painter's art with its significance and chronology), a conclusion, a list of used literature, and illustrations where the great part of photos, referring to the 20th century Armenian art, are for the first time done by the author.

In the 1st chapter "The tradition of Jesus Christ painting" from the first centuries of Christianity till the 20th century is briefly set forth. An important idea of the subject is presented there: the development of the image from an icon to a picture. The image of Jesus Christ in the world art, as well as Armenian medieval and modern period is presented.

In the 2nd chapter the image of Jesus Christ in the Armenian art of the first quarter of the 20th century is presented.

The third chapter refers to the image of Jesus Christ in the Armenian art beginning with the 1960s of the 20th century up to our days.

A comprehensive analysis is introduced:

descriptive, comparative, source studies, stylistic, iconographic, comparative-historical, iconological, technical-technological.

